Փաստ. անվանումը	**Ուսանողի գիտելիքի, հմտությունների և կարողությունների գնահատման կարգ**
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԾՄ-11-04
Հաստատման ամսաթիվը	22/08/2012
Վերջին վերանայման ամսաթիվ	16/05/2025
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող	Աշխատանքային խումբ
Ներդրման/ իրականացման պատասխանատու	Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր

Փաստաթղթի փոփոխությունները

Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն, Ստորագրություն
16/05/2025	Խմբագրվել է 5.3 կետը՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Միջանկյալ ստուգումից «անբավարար» գնահատական ստանալու կամ քննությանը չներկայանալու դեպքում ուսանողները այն չեն վերահանձնում: Բացառություն կարող են կազմել որոշ դեպքեր. Հավելված 2-ում նշված ՀՀ օրենսդրությամբ և ԵՄՀ գիտական խորհրդի կողմից սահմանված առանձնահատուկ դեպքերը, որոնց պարագայում համապատասխան որոշում է ընդունում ռեկտորատը կամ	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ

	ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորը: Միջանկյալ ստուգման վերահանձնումը կազմակերպվում է քննաշրջանի ժամանակ. այն կարող է կազմակերպվել այլ ձևաչափով, այդ թվում՝ բանավոր (վերջնական գնահատման ժամանակ): Փոփոխության են ենթարկվել կարգի 8.5 և 8.7 կետերը՝ մտցնելով տարբերակում վճարովի կրեդիտի հանձնման մոտեցումներում: Խմբագրվել է 8.8 կետը՝ հետևյալ բովանդակությամբ «Սույն որոշմամբ նախատեսված ուսանողի ուսումնառության և գնահատման պայմանները կիրառվում են 2024-2025 ուսումնական տարվա գարնանային կիսամյակից: Վերոհիշյալ և հաջորդ ուսումնական տարվա համար ԵՄՀ ռեկտորատի որոշմամբ քննաշրջանի արդյունքները ամփոփելու ժամանակ կարող են սահմանվել սույն կարգով չնախատեսված ուսանողների պայմանները բարելավող դասընթացների վերահանձնման, գնահատման և/կամ հանրագումարային միավորը ձևավորող անցումային չափանիշներ:»	
14/04/2022	Կարգը լրամշակվել է ՈՒԱ կենտրոնի կողմից՝ հիմքում ունենալով ներդրված այլընտրանքային գնահատման մոտեցումները և ստուգարքների գնահատման տեսանկյունից տեղական և միջազգային լավագույն փորձի ուսումնասիրությունը:	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ Մարիամ Ջիլավյան, Որակի ապահովման կենտրոնի ղեկավար
14/04/2022	Ավելացվել են 6.2 և 6.3 դրույթները. 6.2. Եթե ուսանողի անհարգելի բացակաների թիվը հատում է կիսամյակի ընթացքում նախատեսված լսարանային ընդհանուր ժամերի 30%-ը (հեռակայի դեպքում՝	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ Մարիամ Ջիլավյան, Որակի ապահովման կենտրոնի

	40%-ը), ապա՝ ուսանողը Գիտական խորհրդի որոշմամբ հեռացվում է համալսարանից: 6.3. Եթե ուսանողի բացակայությունները պայմանավորված են սույն կարգի Հավելված 2-ով նախատեսված բացառիկ հարգելի պատճառներով, ապա ամբիոնի վարիչի ներկայացմամբ և ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորի որոշմամբ ուսանողը կարող է լրացնել լսարանային աշխատանքի գնահատականը դասախոսի հանձնարարությամբ ինքնուրույն հավելյալ աշխատանք կատարելով:	ղեկավար
14/04/2022	Ավելացվել է Հավելված 2-ը (Հարգելի համարվող բացակայությունների առանձնահատուկ դեպքեր)	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ Մարիամ Ջիլավյան, Որակի ապահովման կենտրոնի ղեկավար
30/08/2019	Գնահատման սանդղակում ներկայության չափանիշը վերանայվել է դարձնելով 10%, իսկ արտալսարանային աշխատանքներ չափանիշը՝ 15%	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ Մարիամ Ջիլավյան, Որակի ապահովման կենտրոնի ղեկավար
06/02/2018	Կատարվել է մասնակի փոփոխություն	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ
09/02/2016	Վերանայվել է կարգն ամբողջությամբ	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ
24/02/2014	Վերանայվել է կարգն ամբողջությամբ	Սուրեն Օհանյան, Գիտական խորհրդի նախագահ

1. Հղումներ

- Կրթության մասին օրենք
- Բարձրագույն և հետբուհական կրթության մասին օրենք
- Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման օրինակելի կարգ
- ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման /ազատման/ և վերականգնման կարգ

2. Ընդհանուր դրույթներ

2.1. Սույն Կանոնակարգը (այսուհետ՝ կանոնակարգ) սահմանում է Եվրասիա միջազգային համալսարանի (այսուհետ՝ համալսարան) բոլոր կրթական աստիճաններում սովորող ուսանողների գիտելիքների և կարողությունների ընթացիկ, միջանկյալ ու վերջնական ստուգման և գնահատման կանոնները:

3. Գնահատման կարգը

3.1. Համալսարանում առկա են ստուգման երեք հիմնական ձև՝ ընթացիկ, միջանկյալ և վերջնական:

3.2. Համաձայն սույն կարգի յուրաքանչյուր դասընթաց գնահատվում է 100 միավորանոց համակարգով:

3.3. Դասընթացի գնահատման սանդղակը և առանձնահատկությունները սահմանվում և ներկայացվում են առարկայական ծրագրում:

3.4. Դասընթացի ընդհանուր գնահատականի մեջ հաշվի են առնվում առարկայական ծրագրում սահմանված բաղադրիչները, որոնք ընտրվում են սույն կարգի Հավելված 1-ում ներկայացված ցանկից:

3.5. Բոլոր ուսանողները պետք է անցնեն միջանկյալ ստուգում և հանձնեն վերջնական քննություններ այն դասընթացներից, որոնք անցել են տվյալ կիսամյակի ընթացքում (եթե առարկայական ծրագրով ստուգման այլ ձև նախատեսված չէ):

3.6. Միջանկյալ ստուգումը և վերջնական քննություններն անցկացվում են բանավոր, գրավոր, էլեկտրոնային, ԵՄՀ կողմից ընդունված այլընտրանքային գնահատման մոտեցումներով, ինչպես նաև՝ համակցված՝ երկու և ավելի գնահատման մոտեցումների համադրմամբ (հավելված 1-ում ներկայացված ցանկին համապատասխան): Յուրաքանչյուր առարկայի ստուգման (միջանկյալ, վերջնական) կազմակերպման ձևը ներկայացվում է համապատասխան առարկայական ծրագրում:

3.7. Առարկայական ծրագրում նախապես սահմանված գնահատման մեթոդներից դասախոսը կարող է շեղվել՝ նախապես ամբիոնի վարիչի երաշխավորությամբ գրավոր հիմնավորում ներկայացնելով համալսարանի մեթոդխորհուրդ և ստանալով համաձայություն:

4. Արդյունքների ամփոփում և գրանցում

4.1. Ուսանողների ընթացիկ, միջանկյալ և վերջնական գնահատականները մուտքագրվում են համալսարանի ներքին էլեկտրոնային տեղեկատվական համակարգ (E-bsh) և/կամ հասանելի են լինում ուսանողների համար քննությունից հետո ոչ ավել քան 10 աշխատանքային օրերի ընթացքում (գրավոր քննությունների դեպքում՝ 10 օր, այլ քննությունների դեպքում՝ քննությունից հետո նույն օրը):

4.2. Գնահատման արդյունքները չեն փակցվում. ուսանողն իր անհատական ծածկանունով համալսարանի ներքին տեղեկատվական համակարգից տեղեկանում է գնահատման արդյունքներին կամ գնահատման արդյունքների մասին տեղեկատվությունը ստանում է էլեկտրոնային փոստով: Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով քննության արդյունքները կարող են քննարկվել ուսանողների հետ՝ խմբային հանդիպումների ժամանակ:

5. Միջանկյալ և վերջնական ստուգման գնահատումը

5.1. Միջանկյալ և վերջնական ստուգումները գնահատվում են 20 բալով, որից,

- 0 - 7 միավոր՝ անբավարար
- 8 - 12 միավոր՝ բավարար
- 13 - 17 միավոր՝ լավ
- 18 - 20 միավոր՝ գերազանց

5.2. Յուրաքանչյուր ստուգում /միջանկյալ, վերջնական/ գնահատվում է առանձին:

5.3. Միջանկյալ ստուգումից «անբավարար» գնահատական ստանալու կամ քննությանը չներկայանալու դեպքում ուսանողները այն չեն վերահանձնում: Բացառություն կարող են կազմել որոշ դեպքեր. Հավելված 2-ում նշված ՀՀ օրենսդրությամբ և ԵՄՀ գիտական խորհրդի կողմից սահմանված առանձնահատուկ դեպքերը, որոնց պարագայում համապատասխան որոշում է ընդունում ռեկտորատը կամ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորը: Միջանկյալ ստուգման վերահանձնումը կազմակերպվում է քննաշրջանի ժամանակ. այն կարող է կազմակերպվել այլ ձևաչափով, այդ թվում՝ բանավոր (վերջնական գնահատման ժամանակ):

5.4. Դասընթացի առարկայական ծրագրով սահմանված դեպքերում խմբային կամ ինքնուրույն աշխատանքը չներկայացնելու դեպքում ուսանողը չի կարող մասնակցել վերջնական քննության:

5.5. Հեռակա համակարգում սովորող ուսանողների համար միջանկյալ ստուգումը նույնպես իրականացվում է արտալսարանային որևէ առաջադրանքի միջոցով (համաձայն հավելված 1-ում ներկայացված ցանկի): Առարկայական ծրագրում հստակ պետք է ներկայացվեն գնահատման մոտեցումները առկա և հեռակա համակարգով սովորող ուսանողների համար:

5.6. Քննաշրջանում քննության չներկայանալը քննական տեղեկագրում նշվում է "չի ներկայացել" բառերով:

5.7. Միջանկյալ ստուգման համար սահմանվում է մեկշաբաթյա, իսկ վերջնական քննությունների համար՝ երեքշաբաթյա ժամկետ (ժամկետները կարող են փոփոխվել նախագծային կամ այլընտրանքային գնահատման այլ մոտեցմամբ գնահատվող դասընթացների համար): Քննական գրաֆիկները կազմվում են ամբիոնների կողմից և հաստատվում Ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

5.8. Մեկ օրում կարելի է նշանակել ոչ ավել քան 2-3 քննություն:

6. Դասընթացի ամփոփիչ գնահատում

6.1. Բոլոր դասընթացների ամփոփիչ գնահատման համար պարտադիր են Հավելված 1-ում ներկայացված բաղադրիչները. միջանկյալ (25%) և վերջնական (35%) ստուգումները, ներկայությունը (10%) և լսարանային ակտիվ մասնակցությունը (15%): Մնացյալ 15%-ը կարող է տրոհվել տարբեր բաղադրամասերի, որոնք նախապես սահմանվում են առարկայական ծրագրում և ենթակա են փոփոխության դասախոսի և ամբիոնի վարիչի փոխհամաձայնությամբ (կարող է ներառել արտալսարանային խմբային կամ ինքնուրույն աշխատանքներ):

6.2. Եթե ուսանողի անհարգելի բացակաների թիվը հատում է կիսամյակի ընթացքում նախատեսված լսարանային ընդհանուր ժամերի 30%-ը (հեռակայի դեպքում՝ 40%-ը), ապա՝ ուսանողը Գիտական խորհրդի որոշմամբ հեռացվում է համալսարանից:

6.3. Եթե ուսանողի բացակայությունները պայմանավորված են սույն կարգի Հավելված 2-ով նախատեսված բացառիկ հարգելի պատճառներով, ապա ամբիոնի վարիչի ներկայացմամբ և ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտորի որոշմամբ ուսանողը կարող է լրացնել լսարանային աշխատանքի գնահատականը դասախոսի հանձնարարությամբ ինքնուրույն հավելյալ աշխատանք կատարելով:

6.4. Համաձայն սույն կարգի յուրաքանչյուր դասընթաց գնահատվում է 100 միավորանոց համակարգով՝ կիրառելով համապատասխան տոկոսային կշիռները, իսկ առարկայի ամփոփիչ գնահատականի յուրաքանչյուր բաղադրիչ գնահատվում է 20 բալանոց համակարգով:

Օրինակ. եթե ուսանողը կիսամյակի վերջում որևէ դասընթացից ստացել է հետևյալ գնահատականները.

- ներկայությունից՝ 15 միավոր
- լսարանային ակտիվությունից՝ 14 միավոր
- արտալսարանային աշխատանքից՝ 20 միավոր
- միջանկյալ ստուգումից՝ 17 միավոր
- վերջնական ստուգումից՝ 16 միավոր, ապա.

նրա ամփոփիչ գնահատականը հավասար կլինի (15x0.1) + (14x0.15) + (20x0.15) + (17x0.25) + (16x0.35) = 16.45, որն էլ վերջում բազմապատկվում է հինգով (16.45x5 = 82.25), այսինքն՝ ներքևում նշված աղյուսակին համապատասխան ուսանողի ամփոփիչ գնահատականը կլինի 82, տառային նշանակումը՝ A-, իսկ համաժեք միավորը՝ 3.7:

6.5. Որոշ դասընթացներ և կրթական մոդուլներ գնահատվում են S կամ U գնահատականներով: S-ը նշանակում է, որ ուսանողը հասել է առաջադիմության մի մակարդակի, որը դասախոսն ուսումնառության տվյալ մակարդակի համար համարում է բավարար (յուրացրել է նյութի առնվազն 40 տոկոսը): U գնահատականը նշանակվում է, երբ ուսանողը չի բավարարում այդ չափանիշները: Թե S և թե U գնահատականների դեպքում ուսանողի օգտին վարկանիշային միավորներ չեն գրանցվում, և դրանք չեն օգտագործվում ուսանողի միջին որակական գնահատականը հաշվարկելիս: S գնահատականի դեպքում ուսանողը վաստակում է տվյալ դասընթացին հատկացված կրեդիտները, իսկ U գնահատականի դեպքում՝ ոչ:

6.6. Ուսանողին «անավարտ» (I) գնահատական կարող է նշանակվել միայն այն դեպքում, երբ ուսանողի աշխատանքի անավարտ մասը փոքր է, աշխատանքն անավարտ է դասախոսի համար ընդունելի պատճառներով: Անավարտության գնահատականը կարող է փոխարինվել դրական գնահատականով միայն այն դեպքում, երբ անավարտ աշխատանքը լրացվում է հաջորդող կիսամյակի ընթացքում: Այս դեպքում ուսանողի ընթացիկ միջին որակական գնահատականը շարունակում է հիմնված մնալ միայն ավարտված դասընթացների կրեդիտների և գնահատականների վրա:

6.7. Սույն կանոնակարգով չնախատեսված դեպքերում ամբիոնի ներկայացմամբ որոշումը կայացվում է Գիտական խորհրդի կողմից:

7. Գնահատման համակարգը

	Գնահատական	Տառային նշանակում	Թվային համարժեք միավոր	Գիտելիքի գնահատման հիմնական չափանիշները
գերազանց	95-100	A+	4.0	Ուսանողը ցուցաբերել է անթերի կամ աննշան թերություններով գիտելիքներ. - բանավոր կամ գրավոր խոսքը եղել է հստակ, հիմնավորված, - առկա է մտքերի ներկայացման տրամաբանական ընթացք, - ցուցաբերել է վերլուծական մտածողություն (համապատասխան պահանջի առկայության դեպքում), - դասընթացը յուրացրել է ամբողջությամբ, - ձեռք է բերել համակարգված գիտելիքներ, - ազատ տիրապետում է տերմիններին, - կարողացել է կատարել ծրագրից բխող բոլոր առաջադրանքները:
	87-94	A	4.0	
	81-86	A-	3.7	
լավ	75-80	B+	3.3	- յուրացրել է ծրագրի առանցքային խնդիրները և հիմնական բովանդակությունը, - կարողանում է օգտագործել մասնագիտական լեզուն և տերմինները, - մտքերը շարադրում է հիմնականում տրամաբանորեն, երբեմն, սակայն, ոչ հիմնավորված:
	67-74	B	3.0	
	61-66	B-	2.7	
բավարար	55-60	C+	2.3	- ծրագրի բովանդակության իմացությունը հիմնականում մակերեսային է և հատվածային, - դժվարությամբ է օգտագործում մասնագիտական լեզուն և տերմինները, - ոչ միշտ է մտքերը շարադրում տրամաբանված, բացակայում են հիմնավորումները, - դժվարությամբ է կատարում ծրագրից բխող հանձնարարությունները:
	46-54	C	2.0	
	40-45	C-	1.7	
Անբավարար (ներկայացել է, սակայն չի կարողացել բավարարել պահանջները)	21-39	D	1.0	- ծրագրի բովանդակության յուրացման առումով ունիլուրջ բացթողումներ, - չի կարողանում բացատրել և կիրառել հիմնական տերմինները, - գրավոր և բանավոր խոսքը հստակ չէ, անհասկանալի, չի արտահայտում իրական բովանդակությունը,

				- չի կարողանում կատարել ծրագրից բխող առաջադրանքները:
Չներկայացած	0-20	F	0	
Անավարտ	-	I	-	
Ստուգված	>40	S	-	
Չստուգված	<40	U	-	

8. Դասընթացի կրկնություն, վերահանձնում

8.1. Ուսանողների թույլատրվում է վերահանձնել այն դասընթացների քննությունները, որոնցից նրանք ստացել են D, F, I կամ U գնահատականներ:

8.2. Ուսանողները չեն կարող կրկնել կամ վերահանձնել այն դասընթացները, որոնցից ստացել են A, B, C կամ S գնահատականներ:

8.3. Վերջնական քննությունը ձախողելու դեպքում ուսանողը վերահանձնում է առարկան՝ անկախ ամփոփիչ գնահատականի հանրագումարից:

8.4. Ուսանողի ՄՈԳ-ը հաշվելիս հաշվի է առնվում վերջին գնահատականը:

8.5. Հանրագումարային միավորը մինչև 40 միավոր արդյունք գրանցելու դեպքում ուսանողը վերահանձնում է դասընթացը՝ առարկայական ծրագրով նախատեսված ողջ ծավալով: Ուսանողը իրավունք ունի երկու անգամ անվճար լուծարքային շրջանում վերահանձնել դասընթացը (գնահատվում է ըստ բոլոր բաղադրիչների), ինչպես նաև երկու անգամ վերահանձնել դասընթացը՝ վճարովի հիմունքներով կրեդիտների դիմաց: Լուծարքի ժամանակ, երբ ուսանողը վերջնական ստուգման համար ստացել է 8 և ավել միավոր (չի ձախողվել), սակայն հանրագումարային միավորը կրկին չի գերազանցում 40-ը, ապա՝ այն հավասարեցվում է 40-ի, եթե վերահանձնման ժամանակ ուսանողը վաստակել է 12 և ավել միավոր և ներկայության համար ապահովել է առնվազն 50% -ի չեմը: Վերոհիշյալ դրույթը կիրառվում է նաև սույն կարգի 8.7 կետի գ ենթակետի դեպքում նախատեսված վերահանձնման ժամանակ»:

8.6. Ակադեմիական պարտքերի մարման վերջնաժամկետ է սահմանվում ընթացիկ կիսամյակի երրորդ շաբաթվա վերջը:

8.7. Ակադեմիական պարտքերի մարումն անվճար հիմունքներով թույլատրվում է վերահանձնել միայն երկու անգամ: Վճարովի կրեդիտի դիմաց դասընթացը վերահանձնելու համար ուսանողը ռեկտորատի կողմից սահմանված ընթացակարգի համաձայն ներկայացնում է համապատասխան դիմում: Վճարովի կրեդիտի դիմաց վերահանձնման դեպքում ուսանողին առաջարկվում է ստորև նշված վերահանձնման 3 տարբերակ (ըստ ուսանողի ընտրության).

ա) Դասընթացի ամբողջական կրկնություն. այս դեպքում զրոյացվում են դասընթացի համար նշանակված գնահատման բոլոր բաղադրիչները, և ուսանողին հնարավորություն է ընձեռնվում կրկնել դասընթացը՝ բոլոր բաղադրիչների համար ստանալով նոր գնահատականներ: Այն դեպքում, երբ դասընթացը կազմակերպվում է անհատապես տվյալ ուսանողի համար, մեկ կրեդիտի դիմաց սահմանվում է 30000 ՀՀ դրամ (հայերենով ծրագիրը դասավանդելու դեպքում) և 50000 ՀՀ դրամ (օտար լեզվով ծրագիրը դասավանդելու դեպքում), իսկ հեռակայի պարագայում կիրառվում է 50% նվազեցում: Դասընթացը ոչ անհատական կազմակերպելու դեպքում կիրառվում է սույն կետի բ) ենթակետով նախատեսված մեկ կրեդիտի համար սահմանված վճարը,

բ) Ինքնուրույն աշխատանքի կրկնակի ներկայացում և վերջնական ստուգման վերահանձնում. ուսանողը հնարավորություն ունի կրկին ներկայացնել ինքնուրույն աշխատանքը և վերահանձնել վերջնական ստուգումը: Սույ տարբերակը ընտրելու դեպքում հանրագումարային միավորը կազմում է 40, եթե ինքնուրույն աշխատանքի համար նշանակվել է 14 և ավել միավոր, իսկ վերջնական ստուգմանը՝ 12 և ավել միավոր: Վերահանձնման այս դեպքում մեկ կրեդիտի դիմաց սահմանվում է 7000 ՀՀ դրամ (հայերենով ծրագիրը դասավանդելու դեպքում) և 14000 ՀՀ դրամ (օտար լեզվով ծրագիրը դասավանդելու դեպքում),

գ) Վերջնական ստուգման վերահանձնում. ուսանողը հնարավորություն ունի վերահանձնել միայն վերջնական քննությունը: Վճարովի կրեդիտի դիմաց դասընթացը վերահանձնելու համար ուսանողը ռեկտորատի կողմից սահմանված կարգի համաձայն ներկայացնում է համապատասխան դիմում: Վերջնական գնահատականը հաշվարկվում է ըստ բաղադրիչների՝ սահմանված կարգի համաձայն: Այն դեպքում, երբ ընդհանուր հաշվարկված բանաձևով դրական միավոր չի ձևավորվում, սակայն ուսանողը վերջնական ստուգմանը ստացել է 14 և ավել միավոր, ապա հանրագումարային միավորը հավասարեցվում է 40-ի: Վերահանձնման այս դեքպում մեկ կրեդիտի դիմաց սահմանվում է 5000 ՀՀ դրամ (հայերենով ծրագիրը դասավանդելու դեպքում) և 10000 ՀՀ դրամ (օտար լեզվով ծրագիրը դասավանդելու դեպքում):

8.8. Սույն որոշմամբ նախատեսված ուսանողի ուսումնառության և գնահատման պայմանները կիրառվում են 2024-2025 ուսումնական տարվա գարնանային կիսամյակից: Վերոհիշյալ և հաջորդ ուսումնական տարվա համար ԵՄՀ ռեկտորատի որոշմամբ քննաշրջանի արդյունքները ամփոփելու ժամանակ կարող են սահմանվել սույն կարգով չնախատեսված ուսանողների պայմանները բարելավող դասընթացների վերահանձնման, գնահատման և/կամ հանրագումարային միավորը ձևավորող անցումային չափանիշներ:

8.9. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

8.10. Ակադեմիական պարտքերի մարման ժամկետից հետո, եթե առարկայական պարտքերի կրեդիտների գումարը չի գերազանցում 12-ը, ապա սահմանված կարգի համաձայն ուսանողը կարող է առարկայական պարտքերը մարել մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը՝ կրկնելով դասընթացները:

9. Ուսանողի ակադեմիական տեղեկագիրը

9.1. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացվում են նրա ակադեմիական տեղեկագրում (Հավելված 3), վերջինս արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

9.2. Ակադեմիական տեղեկագրում նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ հետևյալ տվյալները. ծրագրային կրեդիտներ, որակավորման կրեդիտներ, վարկանիշային միավորներ և միջին որակական գնահատական:

9.3. **Ծրագրային կրեդիտներ (ԾԿ).** կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

9.4. **Որակավորման կրեդիտներ (ՈԿ)**. ծրագրային կրեդիտի այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

$$ՈԿ = \sum \text{կրեդիտ}$$

9.5. **Վարկանիշային միավորներ (ՎՄ)**. ակադեմիական տեղեկագրում տառային գնահատականները ձևափոխվում են համարժեք թվային միավորների, վերջիններս էլ վարկանիշային միավորների՝ դասընթացի կամ ուսումնական մոդուլի յուրաքանչյուր կրեդիտի համար: Որևէ դասընթացից (կամ կրթական մոդուլից) ստացված վարկանիշային միավորը որոշվում է տվյալ դասընթացի համար սահմանված կրեդիտների և ուսանողի ստացած գնահատականի արտադրյալով.

$$ՎՄ = \sum \text{կրեդիտ}_i \text{ x } ԹԱ_i$$

որտեղ ԹԱi-ն դասընթացից կամ ուսումնական մոդուլից ուսանողի ստացած գնահատականի թվային համարժեքն է:

Օրինակ. եթե ուսանողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից ստացել է համապատասխանաբար 3.3, 3.7 և 2.7 թվային միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վարկանիշային միավորը հավասար կլինի.

ՎՄ = 5x3.3+4x3.7+6x2.7 = 47.5՝ 60 հնարավորից (5x4+4x4+6x4):

9.6. **Միջին որակական գնահատական (ՄՈԳ)**. այս ցուցանիշը ուսանողի գնահատականների կշռված միջին արժեքն է, որը հաշվարկվում է՝ վարկանիշային միավորները որակավորման կրեդիտների վրա բաժանելով.

$$\text{ՄՈԳ} = \frac{\text{ՎՄ}}{\text{ՈԿ}}$$

Օրինակ. նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի.
ՄՈԳ = 47.5/15 = 3.16՝ հնարավոր 4-ից

9.7. Հաշվարկի արդյունքները կլորացվում են մինչև 1/100-ի ճշտությամբ: Տարբերակում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և ամփոփիչ (հաշվարկված մինչև ուսման տվյալ ժամանակահատվածը) միջին որակական գնահատականներ (ՄՈԳ):

10. Ուսանողի ակադեմիական կարգավիճակը

10.1. Ըստ ուսման առաջադիմության ուսանողները դասակարգվում են որպես՝ առաջադիմող, փորձնական շրջանում (նպատակն է ուսանողին հնարավորություն տալ այդ շրջանում ուղղել թերություններն ու բացթողումները և բարձրացնել ուսման առաջադիմությունը՝ ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան) գտնվող և հեռացման ենթակա ուսանողներ:

10.2. Ուսանողը համարվում է **առաջադիմող**, եթե.

- ունի համապատասխան առաջընթաց՝ կիսամյակային կրեդիտների անհրաժեշտ նվազագույն քանակի կուտակման պահանջը կատարելու առումով, այսինքն կուտակել է առնվազն 30 կրեդիտ,
- ապահովում է համալսարանի կողմից սահմանված տվյալ կրթական աստիճանին համապատասխան կիսամյակային ՄՈԳ-ի նվազագույն արժեքը՝ բակալավրիատում և մագիստրատուրայում համապատասխանաբար 1.7 և 2.3 (ՄՈԳ):

10.3. Ուսանողը հայտնվում է **փորձաշրջանում**, եթե.

- ունի առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքեր

10.4. **Հեռացման** ենթակա են այն ուսանողներն, ովքեր.

- քննաշրջանի արդյունքները ամփոփելուց հետո (ներառյալ թույլատրելի վերահանձնումները) ունեն 12 կրեդիտը գերազանցող ակադեմիական պարտքեր (այդ թվում՝ նախորդ կիսամյակների արդյունքները):

10.5. Յուրաքանչյուր կիսամյակի վերջում Ուսումնական հարցերի գրասենյակը ամփոփում է ուսանողների առաջադիմության արդյունքները և տեղեկացնում փորձաշրջանում գտնվող կամ հեռացման ենթակա ուսանողներին, ամբիոնների վարիչներին և համապատասխան մարմիններին:

Հավելված 1. Գնահատման հիմնական բաղադրիչներ

Գնահատման բաղադրիչներին տրամադրվող միավորը (%) նախապես ներկայացվում է առարկայական ծրագրում, սակայն առաջարկությունների և անհրաժեշտության դեպքում հնարավոր է վերանայում, փոփոխություն:

Դասընթացի գնահատման բաղադրիչներ

N	Բաղադրիչի անվանումը	Հնարավոր տարբերակներ[1]	%
Ն	Ներկայություն	Հաճախումների հաշվառում կատարում է դասախոսը՝ յուրաքանչյուր օրվա կտրվածքով մուտքագրում իրականացնելով ներքին տեղեկատվական համակարգում:	10
ԼԱ	Լսարանային աշխատանք	Լսարանային աշխատանքի գնահատականը որոշվում է սեմինարների, լսարանային գործնական աշխատանքների, լսարանային թիմային աշխատանենքրի, ընթացիկ թեստի (quiz) և առարկայական ծրագրում նշված այլ բաղադրիչների հիման վրա:	15
ԱԱ	Արտալսարանային աշխատանք	Նշվում են այն թեմատիկ խմբային կամ ինքնուրույն աշխատանքները, որոնք պետք է կատարեն ուսանողները. - մշակումներ գիտական գրականությունից, - խնդիրներ, - դեպքի ուսումնասիրություններ և վերլուծություններ, - քանակական կամ որակական ուսումնասիրություններ և վերլուծություններ, - ընթերցանություն, - մասնագիտական և կրթական նպատակներով տեսահոլովակի նկարահանում կամ ֆոտոնկարահանում (կամ հավաքագրում), - մասնագիտական, կրթական նպատակներով ձայնագրությունների իրականացում (օրինակ՝ փորձագետների հետ հարցազրույց), - ներկայացման պատրաստում, - կրթական բլոգի, կայքի ստեղծում, - հոդվածի կամ նյութի քննադատական վերլուծություն (critique) և այլն: Առարկայական ծրագրում այս գնահատման բաղադրիչը նույնպես հստակ պետք է ներկայացված լինի:	15
ՄՍ	Միջանկյալ ստուգում	Միջանկյալ ստուգումը ուսանողի յուրաքանչյուր կիսամյակի սկզբում առաջին 2 ամսվա ընթացքում ստացած մնացորդային գիտելիքների ստուգումն է: Միջանկյալ ստուգում կարող է իրականացվել հետևյալ մոտեցումներով.	25

[1] ներկայացված են հնարավոր տարբերակներ. ցանկը կարելի է փոփոխել, համալրել

		- գրավոր քննություն, - բանավոր քննություն, - էլեկտրոնային թեստ, - Բաց գրքի քննություն/ Open Book Exam - «Տնային» քննություն/ Take Home Exam - Դեպքի ուսումնասիրություն և վերլուծություն/ Case Study - Քանակական կամ որակական վերլուծություններ/ Qualitative and Quantitative Analysis - Համագործակցային քննություն/ Collaborative Testing - Նախագծեր/ Projects - Մշակումներ գիտական գրականությունից/ Literature Review - Հոդվածի կամ նյութի քննադատական վերլուծություն/ Critique և այլն: Թույլատրվում է կիրառել վերևում նշված 2 և ավելի մեթոդների համադրությունը: Ընտրված յուրաքանչյուր մեթոդ պետք է լինի հիմնավորված և նախապես ներկայացված դասընթացի առարկայական ծրագրում:	
ՎՍ	Վերջնական ստուգում	Վերջնական քննությունը կազմակերպվում է յուրաքանչյուր կիսամյակի վերջում և ներառում է հարցեր և առաջադրանքներ նաև միջանկյալ քննությունից: Վերջնական ստուգում կարող է իրականացվել հետևյալ մոտեցումներով. - գրավոր քննություն, - բանավոր քննություն, - էլեկտրոնային թեստ, - Բաց գրքի քննություն/ Open Book Exam - «Տնային» քննություն/ Take Home Exam - Դեպքի ուսումնասիրություն և վերլուծություն/ Case Study - Քանակական կամ որակական վերլուծություններ/ Qualitative and Quantitative Analysis - Համագործակցային քննություն/ Collaborative Testing - Նախագծեր/ Projects - Մշակումներ գիտական գրականությունից/ Literature Review - Հոդվածի կամ նյութի քննադատական վերլուծություն/ Critique և այլն: Թույլատրվում է կիրառել վերևում նշված 2 և ավելի մեթոդների համադրությունը: Ընտրված յուրաքանչյուր մեթոդ պետք է լինի հիմնավորված և նախապես ներկայացված դասընթացի առարկայական ծրագրում:	35

Հավելված 2-ը. Հարգելի համարվող բացակայությունների առանձնահատուկ դեպքեր.

1. բարձր վարակելիության ինդեքս ունեցող հիվանդություններ (ջրծաղիկ, կարմրուկ, կարմրախտ, ինֆեկցիոն հեպատիտ),
2. սուր աղիքային վարակներ (դիզենտերիա, սալմոնելյոզ, տիֆ, պարատիֆ),
3. սոմատիկ ծանր պաթոլոգիաներ, որոնք պահանջում են 7 և ավելի օր 10 տևողությամբ բուժում անկողնային պայմաններում,
4. կենսական ցուցումներով կատարվող վիրահատություններ,
5. ծննդաբերություն,
6. ուղեգրում ԵՄՀ կողմից՝ վարչակազմի գրավոր թույլտվությամբ,
7. մասնակցություն միջոցառումների՝ ԵՄՀ վարչակազմի գրավոր թույլտվությամբ,
8. ծանուցագրով զինկոմիսարիատ, դատարան կամ այլ իրավապահ մարմին ներկայանալիս,
9. ուսանողի արտակարգ իրավիճակում հայտնվելու, ծնողի, զավակի, պապի, տատի, եղբոր, քրոջ ծանր հիվանդության կամ մահվան դեպքերում:

Հավելված 3.

Ակադեմիական տեղեկագիր

Անձնական համարը	**Ուսանողի անուն ազգանուն հայրանուն**

Մասնագիտություն	**Մասնագիտացում**	**Որակավորում**

20 -20 ուս. տարի
Աշնանային կիսամյակ

Դասընթացի անվանումը	**ECTS կրեդիտ**	**Գնահատական**	**Նիշ**	**Թվային համարժեք միավոր**
Դասընթաց 1	5	86	A-	3.7
Դասընթաց 2	5	60	C+	2.3
Դասընթաց 3	4	65	B-	2.7
Դասընթաց 4	3	65	B-	2.7
Դասընթաց 5	3	90	A	4
Դասընթաց 6	5	66	B-	2.7
Դասընթաց 7	2	58	C+	2.3
Դասընթաց 8	3	40	S	-

Ծրագրային ECTS կրեդիտներ	**Որակավորման կրեդիտներ**	**Վարկանիշային միավոր**	**Կիսամյակային միջին որակական գնահատական**
30	27	79.00	2.93

Լրացված ծրագրային ECTS կրեդիտներ	**Լրացված որակավորման կրեդիտներ**	**Լրացված վարկանիշային միավոր**	**Ամփոփիչ միջին որակական գնահատական**
30	27	79.00	2.93